

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՆԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

Քրիստինե ԱՐՍԵՆՅԱՆ

*ԵՊՄՀ պատմության և իրավագիտության
ֆակուլտետի իրավագիտության և նրա
դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դասախոս*

Վաղենության ժամկետը հանցագործությունն ավարտվելուց կամ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով նախատեսված այն ժամանակահատվածն է, որն անցնելուց հետո հանցանք կատարած անձը չի կարող քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկվել:

Գործող քրեական օրենսդրությունը սահմանում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու վաղեմության որոշակի ժամկետներ: Ընդ որում, այդ ժամկետները չեն կարող կամայականորեն սահմանվել: դրանց հիմքում պետք է որոշակի հայեցակարգ ընկած լինի: Խոսքը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքին վերաբերող հայեցակարգի մասին է:

Իրավաբանական գրականության մեջ այս հարցի շուրջ միասնական կարծիք չկա: Այսպես, քրեագետների մի մասը գտնում է, որ վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքը հանցագործության և այն կատարած անձի հանրային վտանգավորության կորուստն է: Մյուսներն այս դեպքում անձին պատասխանատվությունից ազատելու

հիմք են համարում միայն հանցագործության հանրային վտանգավորության կորուստը²: Մասնագիտական գրականության մեջ նշվում են նաև այնպիսի հիմքեր, ինչպիսիք են ապացույցների հնարավոր կորուստը³, հանցագործության և այն կատարող անձի մասին հիշողության կորուստը կամ թուլացումը⁴:

Մեր կարծիքով, հանցագործության և այն կատարող անձի մասին հիշողության կորուստը կամ թուլացումը, ապացույցների հնարավոր կորուստը, հանցագործության հանրային վտանգավորության կորուստը ոչ մի դեպքում չեն կարող հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ:

Ինչ վերաբերում է հիշողության կորստին, ապա պետք է նշել, որ հիշողությունը ֆիզիոլոգիական բարդ երևույթ է, որն ունի իր տեսակները, անհատական-տիպաբանական առանձնահատկությունները⁵: Այն, ինչ լավ հիշում է մեկը, մեկ ուրիշը կարող է շուտ մոռանալ: Բացի այդ՝ ի՞նչ հիշողության կորստի կամ թուլացման մասին կարող է խոսք լինել տուժողի կամ նրա հարազատների կապակցությամբ: Կամ, ինքը՝ հանցավորը, արդյո՞ք մոռանում է իր կատարածը: Հանցագործության մասին հիշողությունն ընդգրկվում է այսպես կոչված երկարատև հիշողության կառուցվածքի մեջ, որը պահպանվում է շատ երկար ժամանակ, իսկ շատ դեպքերում՝ ամբողջ կյանքի ընթացքում⁶:

Հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու

փաստարկ չի կարող հանդիսանալ նաև ապացույցների հնարավոր կորուստը: Նախ՝ ապացույցների կորուստ կարող է և տեղի չունենալ: Բացի այդ, ապացույցների անբավարարությունը ինքնուրույն դատավարական փաստարկ է, որը քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է հանդիսանում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 35-ի երկրորդ մասի համաձայն՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը՝ կարճման կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու դեպքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Մեր կարծիքով, ճիշտ չէ խոսել նաև հանցագործության հանրային վտանգավորության կորստի մասին: Կատարված արարքի հանցավոր լինելը որոշվում է երեք չափանիշով՝ հանրային վտանգավորություն, քրեական հակաիրավականություն և մեղավորություն: Այսինքն՝ եթե արարքը տվյալ ժամանակահատվածում գործող քրեական օրենքով նախատեսված է որպես հանցագործություն, կատարվել է մեղավորությամբ և վնաս է պատճառել օրենքով պաշտպանվող շահերին, ապա այդ արարքը հանցագործություն է: Հանցագործության հանրային վտանգավորությունը, որն ունի երկու դրսևորում՝ որակական և քանակական, կոնկրետ հասկացություն է: Հանրային վտանգավորության որակական արտահայտությունը հանրային վտանգավորության բնույթն է, որը որոշվում է հանցագործությամբ վնասված հասարակական հարաբերությունների բնույթով, այսինքն՝ հանցագործության օբյեկտով, իսկ հանրային վտանգավորության քանակական արտահայտությունը հանրային վտանգավորության աստիճանն է, որը որոշվում է մի քանի չափանիշներով՝ պատճառված վնասի չափ, կատարման եղանակ, տեղ, ժամանակ, դրդապատճառ, նպատակ և այլն: Մի՞թե կատարված ա-

րարքից հետո որոշակի ժամանակ անցնելը կարող է ազդել դրա հանրային վտանգավորության վրա: Կարծում ենք, որ ոչ: Բանն այն է, որ կատարման պահին արարքը վնաս է պատճառում օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին՝ հանցագործության օբյեկտին, և դրանից հետո անցած ժամանակը չի կարող չեզոքացնել տվյալ պահին պատճառած վնասը: Եվ այս տեսանկյունից կատարված արարքից հետո անցած ժամանակահատվածը ոչ մի նշանակություն չունի. մեկ տարի կանցնի, թե քսան, միևնույնն է. կատարվածը հանցագործություն է և վնաս է պատճառել օրենքով պաշտպանվող շահերին: Մեր կարծիքով, արարքի հանրային վտանգավորության կորստի մասին կարելի է խոսել միայն ապաքրեականացման դեպքում, երբ օրենսդիրը, վերագնահատելով հանցագործության այս կամ այն տեսակի հանրային վտանգավորությունը, գտնում է, որ այն կորցրել է հանցագործությանը հատուկ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և բացառում է այն քրեական օրենսգրքից:

Անդրադառնանք հանցանք կատարած անձի հանրային վտանգավորության կորստի հարցին: Միակ չափանիշը, որը վկայում է անձի հանրային վտանգավորության մասին, նրա կողմից հանրորեն վտանգավոր արարքի (պարտադիր չէ հանցագործության) կատարումն է: Հանրորեն վտանգավոր արարքը, որը օբյեկտիվ վնաս է պատճառում, տեսանելի ու շոշափելի բնույթ ունի, անձի հանրային վտանգավորության ախտանիշն է: Այն, որ հանցանքը կատարելու պահին անձն իրենից հանրային վտանգավորություն է ներկայացնում, կասկած չի հարուցում: Բայց այստեղ արդեն, ի տարբերություն հանցագործության, արարքից հետո անցած ժամանակը էական նշանակություն է ստանում: Եթե կատարված հանցանքից հետո բավականաչափ ժամանակ է անցնում, և այդ ընթացքում անձը հանրորեն վտանգավոր նոր արարք չի կատարում, ապա բոլոր հիմքերը կան

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կարծելու, որը անձը կորցրել է իր հանրային վտանգավորությունը: Այն, որ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքը անձի հանրային վտանգավորության կորուստն է, անուղղակի երևում է նաև այս ինստիտուտները կիրառելու համար նախատեսված պայմաններից: Դրանք երկուսն են՝ 1) հանցանքը կատարելուց հետո պետք է անցնի օրենքով նախատեսված որոշակի ժամանակ, 2) չպետք է լինի այդ ժամանակահատվածն անցնելու որևէ խոչընդոտ:

Հանցանքը կատարելուց հետո որոշակի ժամանակ անցնելը անհրաժեշտ է անձի հանրային վտանգավորության կորստի մասին հավանական ենթադրություն անելու համար:

Ինչ վերաբերում է այդ ժամանակահատվածն անցնելու խոչընդոտներին, ապա դրանք երկուսն են՝ նոր հանցանքի կատարումը կամ քննությունից կամ դատից խուսափելը: Փաստորեն, խոսքը հանցագործությունից հետո անձի դրսևորած այնպիսի վարքագծի մասին է, որը վկայում է նրա հանրային վտանգավորության մասին, այն մասին, որ անձը արժանի չէ ազատվելու պատասխանատվությունից կամ պատժից հենց այն պատճառով, որ շարունակում է հանրության համար վտանգավոր լինել ու կարիք ունի քրեաիրավական ներգործության:

Այսպիսով, վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքը անձի հանրային վտանգավորության կորստի մասին հավանական ենթադրությունն է, որը հիմնվում է անձի հետ հանցավոր վարքագծի գնահատման վրա:

Նշված հայեցակարգի հիման վրա քննարկենք քրեական պատասխանատվության ենթարկելու և մեղադրական դա-

տավճիռը կատարելու վաղեմության ժամկետների օրենսդրական սահմանմանը վերաբերող հարցերը:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 75 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից»:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը վաղեմության ժամկետը կապում է հանցագործության ծանրության հետ: Ընդ որում, վաղեմության ժամկետը միշտ չէ, որ համընկնում է հանցագործությունը դասակարգման այս կամ այն խմբում ընդգրկելու համար չափանիշ ծառայող պատժի չափին: Այսպես, ՀՀ քր. օր.-ի հոդված 19-ի երկրորդ մասի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը: Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզ-

գուշութեամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Փաստորեն, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում վաղեմության ժամկետը համընկնում է միայն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար նախատեսված պատժաչափի հետ:

Արդյո՞ք օրենսդրի նման մոտեցումը հիմնավորված է ու արդարացի: Կարծում ենք, որ ոչ: Օրենսդրական նման կարգավորման դեպքում հնարավոր է այնպիսի իրադրություն, որ պատժի ժամկետը զգալիորեն գերազանցի վաղեմության ժամկետը, և անարդարացի վիճակ ստեղծվի: Օրինակ՝ երկու տարբեր անձինք կատարում են 33 քր. օր.-ի հոդված 242-ի երրորդ մասով նախատեսված հանցանք, որի սանկցիան չորսից տասը տարի ժամկետով ազատազրկումն է: Այսինքն՝ կատարում են միջին ծանրության հանցանք, որի վաղեմության ժամկետը հինգ տարի է: Ենթադրենք՝ հանցավորներից մեկը բռնվում ու քրեական պատասխանատվության է ենթարկվում, և նրա նկատմամբ նշանակվում է հինգ տարուց ավելի ժամկետով ազատազրկում, իսկ մյուսը անհայտ է մնում իրավապահ մարմիններին: Երկրորդ հանցավորը հինգ տարի ապրում է իր կյանքով՝ ուղղակի անհանգստանալով, թե հանկարծ չբացահայտվի, և այդ ժամանակահատվածն անցնելուց հետո հանգիստ շարունակում է ապրել, իսկ մյուսը շատ ավելի երկար ժամանակ կրում է պատժի բոլոր զրկանքները: Նման անհամասնությունը, որը գոյություն ունի վաղեմության ժամկետների ու հնարավոր պատժաչափի միջև, անընդունելի է: Դրա համար կարծում ենք՝ ճիշտ կլիներ վերանայել 33 գործող քր. օր.-ով նախատեսված վաղեմության ժամկետները: Դրանք պետք է գերազանցեն այն հնարավոր պատժի ժամկետը, որը կարող է նշանակվել հանցագործության տվյալ տեսակի համար: Բացի այդ, պետք է

նկատի ունենալ այն հանգամանքը, որ պատժի նպատակը պատժի ենթարկված անձին ուղղելն է: Ենթադրվում է, որ պատժի ժամկետը այն ժամանակահատվածն է, որն անհրաժեշտ ու բավարար է այդ նպատակն իրագործելու համար: Քանի որ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը անձի հանրային վտանգավորության կորուստն է, ինչը վկայում է նրա ուղղված լինելու մասին, ապա, մեր կարծիքով, այդ ժամկետը պետք է այնքան լինի, որ անհրաժեշտ ու բավարար լինի նման ենթադրություն անելու համար: Ուստի այդ ժամկետը չի կարող պակաս լինել պատժի ժամկետից: Դեռ ավելին՝ կարող է նաև գերազանցել այն:

Պետք է նշել, որ հայրենական քրեական օրենսդրության զարգացման տարբեր ժամանակահատվածներում եղել են վաղեմության ժամկետների սահմանման՝ մեր առաջարկած մոտեցմանը նման կարգավորումներ, որոնք, սակայն, հետևողական և համակարգված կարգավորումներ չեն եղել և ընդհանուր կանոնից բացառություն են հանդիսացել: Այսպես, ՅՍՍՀ 1961թ. քր. օր.-ի 44 հոդվածի առաջին մասի երկրորդ կետով վաղեմության ժամկետը սահմանված էր երեք տարի այնպիսի հանցագործություն կատարելու համար, որի համար ըստ օրենքի կարող էր նշանակվել ազատազրկում երկու տարուց ոչ ավելի ժամանակով, կամ այնպիսի պատիժ, որը կապված չէ ազատազրկման հետ: Նույն հոդվածի երրորդ կետով վաղեմության ժամկետը սահմանված էր հինգ տարի այնպիսի հանցագործություն կատարելու համար, որի համար ըստ օրենքի կարող էր նշանակվել ազատազրկում հինգ տարուց ոչ ավելի ժամանակով, իսկ չորրորդ կետով վաղեմության ժամկետը սահմանված էր տասը տարի այնպիսի հանցագործություն կատարելու համար, որի համար ըստ օրենքի կարող էր նշանակվել ավելի խիստ պատիժ, քան հինգ տարի ժամկետով ազա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տազրկումը⁹: Համանման կարգավորում էր առկա նաև ՀՍՍՌ 1927թ. օրենսգրքում, որի 14 հոդվածի համաձայն՝ «Քրեական հետապնդում տեղի ունենալ չի կարող՝

ա) եթե այն հանցագործությունից հետո, որի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում 5 տարուց ավելի ժամանակով, անցել է արդեն 10 տարի.

բ) եթե այն հանցագործությունից հետո, որի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում 5 տարուց ոչ ավելի ժամանակով, անցել է արդեն 5 տարի.

գ) եթե այն հանցագործությունից հետո, որի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում մինչև մեկ տարի ժամանակով, կամ որի համար օրենքն ավելի մեղմ պատիժ է սահմանում, քան ազատազրկումը, անցել է արդեն երեք տարի»¹⁰:

Ինչպես տեսնում ենք, նախկին օրենսդրությամբ նույնպես վաղեմության ժամկետները, չնչին բացառություններով, համընկնում էին հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի առավելագույն չափի հետ:

Նույն իրավիճակն է նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում: Բայց, ի տարբերություն հայրենական օրենսդրության, դրանցում նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության զգալիորեն ավելի երկար ժամկետներ, ինչը որոշ չափով մեղմում է մեր նշած հնարավոր անարդարացիությունը: Այսպես, Իսպանիայի քրեական օրենսգրքի 131 հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանցագործության վաղեմության ժամկետը հաշվակցվում է հետևյալ կերպ՝

քսան տարի, եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը տասնհինգ տարուց ավելի է,

տասնհինգ տարի, եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը տասը տարուց ավելի ժամկետով իրա-

վունքներից զրկումն է կամ տասը տարուց մինչև տասնհինգ տարի ազատազրկումը,

տասը տարի, եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը վեցից տասը տարի ժամկետով իրավունքներից զրկումն է կամ հինգից տասը տարի ժամկետով ազատազրկումը,

հինգ տարի՝ այլ ծանր հանցագործությունների համար,

երեք տարի՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար¹¹:

Քրեական պատասխանատվության ենթարկելու ավելի երկար ժամկետներ է նախատեսում ԳՂՀ քրեական օրենսգիրքը, որի 78 պարագրաֆի երրորդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետը կազմում է՝

երեսուն տարի, եթե հանցագործության համար նախատեսված է ցմահ ազատազրկում,

քսան տարի, եթե հանցագործության համար նախատեսված է տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկում,

տասը տարի, եթե հանցագործության համար նախատեսված է հինգից տասը տարի ժամկետով ազատազրկում,

հինգ տարի, եթե հանցագործության համար նախատեսված է մեկից հինգ տարի ժամկետով ազատազրկում,

երեք տարի՝ այլ հանցագործությունների դեպքում¹²:

Ինչպես տեսնում ենք, մյուս երկրների քրեական օրենսդրություններում էլ վաղեմության ժամկետը կապվում է հանցագործության տեսակի հետ, բայց, ի տարբերություն ՀՀ քր. օր.-ի, այն նույնանում է հանցագործության համար օրենքով նախատեսված առավելագույն պատժի հետ, և դրանից պակաս չէ: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ վերանայել ՀՀ քր. օր.-ի 75 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Ինչպես արդեն նշել ենք, վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը անձի հանրային վտանգա-

վորության կորուստն է, ինչը վկայում է նրա ուղղված լինելու մասին, ուստի վաղեմության ժամկետը պետք է այնքան լինի, որ անհրաժեշտ ու բավարար լինի նման ենթադրություն անելու համար: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել պատժի ժամկետից և կարող է նույնիսկ գերազանցել դրան: Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի հոդված 75-ում սահմանել վաղեմության հետևյալ ժամկետները.

1) հինգ տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) տասը տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասնհինգ տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) քսան տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

Նման ժամկետներ սահմանելու դեպքում, բնականաբար, պետք է ավելանան ՀՀ քր. օր.-ի հոդված 75-ի չորրորդ մասով նախատեսված ժամկետները: Առաջարկում ենք հետևյալ ձևակերպումը. «Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել է տասնհինգ տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարվելու օրվանից՝ քսանհինգ տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությանը»: Նշված ժամկետների այսպիսի ավելացումը պայմանավորված է ոչ միայն վաղեմության ժամկետների միջև համամասնությունն ապահովելու ցանկությանը, այլև այն հանգամանքով, որ այս դեպքում խուսքը քննությունից կամ դատից խուսափող անձի մասին է: Մեր կարծիքով, քննությունից կամ դատից խուսափող անձն իրենից ավելի մեծ հանրային վտանգավորություն է ներկայացնում, և նրա ուղղված լինելը, հանրային վտանգավորության կորուստը

ու այդ հիմքով պատժի աննպատակահարմարությունը հավաստելու համար ավելի երկար ժամանակ է հարկավոր: Իրավաբանական գրականության մեջ նույնիսկ առաջարկություն է արվել նման դեպքերում ընդհանրապես բացառել վաղեմության ժամկետի կիրառումը¹³: Նման արմատական դիրքորոշումը ընդունելի չէ: Վաղեմության ժամկետը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հանցանք կատարած անձն ապացուցում է իր հանրային վտանգավորության կորուստը, իր ուղղված լինելը: Այդպիսի հնարավորություն պետք է տալ նաև այն անձին, ով խուսափել է քննությունից կամ դատից: Հակառակ դեպքում, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, հանցանք կատարած անձը զրկվում է որևէ շանսից, և կատարած հանցանքը դառնում է նրա ճակատագրի անելանելի վերջը¹⁴: Ուստի, եթե քննությունից կամ դատից խուսափող անձը օրենքով նախատեսված ժամանակահատվածում նոր հանցանք չի կատարել, ապա պետք է տլնել այն կանխավարկածից, որ նա ուղղվել է ու կորցրել իր հանրային վտանգավորությունը: Այլ հարց է, որ, ինչպես արդեն նշել ենք, դրա համար պետք է ավելի երկար ժամանակ սահմանվի:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկել նաև ռեցիդիվի դեպքում վաղեմության ժամկետի հարցը: Ինչքան էլ գործող օրենսդրությունը հրաժարվի ռեցիդիվիստ հասկացությունից, ինչքան էլ քրեագետների մի մասը պնդի, թե ռեցիդիվը ոչ թե անձը, այլ հանցանքը բնութագրող ինստիտուտ է, միևնույնն է, դրա հիմքում իրականում ընկած է անձի հանրային վտանգավորության գաղափարը: ՀՀ քր. օր.-ի հոդված 63-ի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը կատարելու ռեցիդիվը: Նույն օրենսգրքի հոդված 22-ի առաջին մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությանը կատարված հանցանքի համար: Այնուհետև հողված 22-ի մյուս մասերում սահմանվում են վտանգավոր ու առանձնապես վտանգավոր ռեցիդիվ հասկացությունները: Ռեցիդիվի բնորոշումն արդեն իսկ ցույց է տալիս, որ խոսքն իրականում անձի մասին է. «...այն անձի կողմից, ով...»: Բացի այդ, եթե ռեցիդիվը բնութագրում է հանցանքը, այլ ոչ թե անձը, ապա հարց է առաջանում, թե ինչու է այն համարվում պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Ենթադրենք՝ մեկը առաջին անգամ հարյուր հազար դրամի գողություն է կատարել, իսկ մյուսը, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությանը կատարված հանցանքի համար, իննսուհինգ հազար դրամի հափշտակություն է կատարել: Երկուսի արարքն էլ որակվում է ՀՀ քր. օր.-ի 177 հոդվածի առաջին մասով՝ որպես հասարակ գողություն: Եթե ռեցիդիվը պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք ճանաչելու հիմքում անձի հանրային վտանգավորությունը չէ, ապա ինչո՞ւ բերված օրինակում երկրորդ անձի պատասխանատվությունն ու պատիժը պետք է ավելի խիստ լինեն:

Այսպիսով, ռեցիդիվը անձի հանրային վտանգավորության ցուցանիշներից է: Այն վկայում է տվյալ անձի հակասոցիալական կայուն դիրքորոշման մասին, այն մասին, որ քրեաիրավական ներգործությունը տվյալ անձի նկատմամբ արդյունավետ չի եղել, որ պատիժն իր նպատակին չի հասել: Ուստի, մեր կարծիքով, չի կարելի ռեցիդիվի դեպքում սահմանել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության նույն ժամկետները: Հակասոցիալական կայուն դիրքորոշում ունեցող անձի ուղղված լինելն ու այդ հիմքով պատժի աննպատակահարմարությունը հավաստե-

լու համար ավելի երկար ժամանակ է անհրաժեշտ: Ընդ որում, այդ ժամկետները պետք է տարբերակվեն ըստ ռեցիդիվի տեսակի:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ռեցիդիվի դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները սահմանելու հետևյալ կարգը.

1) հասարակ ռեցիդիվի դեպքում քր. օր.-ի հոդված 75-ի առաջին մասով սահմանված ժամկետները համապատասխանաբար ավելանում են 1/4-ով,

2) վտանգավոր ռեցիդիվի դեպքում քր. օր.-ի հոդված 75-ի առաջին մասով սահմանված ժամկետները համապատասխանաբար ավելանում են 1/3-ով

3) առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում քր. օր.-ի հոդված 75-ի առաջին մասով սահմանված ժամկետները համապատասխանաբար ավելանում են 1/2-ով:

Անդրադառնա՞նք մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետներին:

ՀՀ քր. օր.-ի 81 հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հանցագործության համար դատապարտված անձն ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվում հետևյալ ժամկետներում, և սահմանում է այն նույն ժամկետները, որոնք նախատեսված են հոդված 75-ի առաջին մասում: Մեղադրական դատավճռի վաղեմության դեպքում խոսքն այն մասին է, որ հանցանք կատարած և արդեն իսկ դատապարտված անձի նկատմամբ այս կամ այն պատճառով հնարավոր չի լինում իրականացնել մեղադրական դատավճռով նշանակված պատիժը: Հանգամանքները, որոնց ուժով դա հնարավոր չի լինում անել, կարող են տարբեր լինել՝ դատապարտյալի ծանր հիվանդությունը, արտակարգ հանգամանքները, դատավճռի կատարման հետաձգումը, դատավարական փաստաթղթերի կորուստը և այլն: Այս դեպքում դատավճիռը կատարելու անհնա-

րինությունը ըստ էության չպետք է պայմանավորված լինի դատապարտյալի դիտավորյալ արարքներով: Դրա համար էլ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է պատիժը կրելուց: Ինչպես քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում, այս դեպքում ևս վաղեմության ժամկետի կիրառման և անձին պատժից ազատելու հիմքը նրա հանրային վտանգավորության կորուստն է¹⁶: Բայց այս դեպքում արդեն վաղեմության ժամկետների հարցը մի փոքր այլ ձևով պետք է լուծվի: Մեր կարծիքով, այս դեպքում կարևոր է ոչ թե հանցագործության տեսակը, այլ նշանակված պատիժը: Անձի հանրային վտանգավորությունը որոշվում է ոչ միայն կատարած հանցանքի ծանրությամբ, այլև այդ հանցանքը կատարելու հանգամանքներով, հանցավորի անձնային առանձնահատկություններով: Անձի հանրային վտանգավորությունը արտացոլվում է ոչ միայն և ոչ այնքան նրանով, թե իր կատարած հանցանքը դասակարգման որ խմբի մեջ է մտնում, այլ անձի նկատմամբ դատարանի դատավճռով նշանակված կոնկրետ պատժով: Ի դեպ, իդեալական տարբերակ կլիներ, եթե քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն էլ կապվեին ոչ թե հանցագործության տեսակի, այլ նշանակված պատժի հետ: Այլ հարց է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները որոշելու նման կարգը տեխնիկապես անհնար է, որովհետև իրավասու մարմինները չեն կարող կանխորոշել, թե ինչ պատժի կարժանանար անձը, եթե վաղեմության ժամկետն անցած չլիներ: Բայց մեղադրական դատավճռի առկայության դեպքում պատիժն արդեն նշանակված է: Ուստի մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետը, մեր համոզմամբ, պետք է պայմանավորված լինի նշանակված պատժով: Չէ՞ որ հենց այդ պատիժն է արտացոլում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորության աստիճանը:

Բացի այդ՝ այն ժամկետները, որոնք նախատեսված են գործող քր. օր.-ի 81 հոդվածի առաջին մասում, ոչ մի քննադատության չեն դիմանում: Մեղադրական դատավճռի վաղեմության կիրառման դեպքում անձը ազատվում է նաև լրացուցիչ պատիժներից: Ընդ որում, լրացուցիչ պատժի ժամկետը կարող է ավելի երկար լինել, քան վաղեմության ժամկետն է: Սասնավորապես, ոչ մեծ ծանրության հանցագործության համար վաղեմության ժամկետ է սահմանված երկու տարին, իսկ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ կարող է նախատեսվել մեկից երեք տարի ժամկետով: Բացի այդ՝ վաղեմության ժամկետը կարող է պակաս լինել նաև հիմնական պատժի ժամկետից: Օրինակ՝ անձը դատապարտվել է միջին ծանրության անգոյշ հանցագործության համար ութ տարի ժամկետով ազատագրվման, իսկ միջին ծանրության հանցագործության համար դատավճռի վաղեմության ժամկետը հինգ տարի է: Անարդարացի վիճակ կարող է ստեծվել նաև երկու տարբեր դատապարտյալների համար: Օրինակ՝ մեկը ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցագործության համար դատապարտվել է երկու տարի ժամկետով ազատագրվման, իսկ մյուսը միջին ծանրության անգոյշ հանցագործության համար՝ երեք տարի վեց ամիս ժամկետով ազատագրվման: Առաջինի համար վաղեմության ժամկետը երեք տարի է, իսկ երկրորդի համար՝ հինգ տարի, թեև նրանց հանրային վտանգավորությունը շատ չի տարբերվում, դեռ ավելին՝ երկրորդը անգոյշությամբ հանցանք կատարող է, որի հանրային վտանգավորությունը, մեր համոզմամբ, ավելի պակաս է: Անարդարացի վիճակը կարող ավելի սրվել, եթե դատարանը, քր. օր.-ի հոդված 64-ը կիրառելով, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակի:

Շատ երկրների քրեական օրենսգրքերում մեղադրական դատավճռի վաղեմու-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յան այնպիսի երկար ժամկետներ են նախատեսված, որոնք թույլ են տալիս խուսափելու նման անարդարացի վիճակներից: Ընդ որում, այդ ժամկետները պայմանավորված են նշանակված պատժով ու զգալիորեն գերազանցում են այն, ինչը, անկասկած, տրամաբանական է. վաղեմության ժամկետը, որի ընթացքում անձը ըստ էության ոչ մի լուրջ զրկանք չի կրում, պետք է ավելի լինի այն պատժի ժամկետից, որը ի կատար ածելու դեպքում անձը իրական զրկանքներ էր կրելու: Այսպես, Իսպանիայի քր. օր.-ի հոդված 133-ի համաձայն՝ նշանակված պատիժը ի կատար չի ածվում, եթե անցել են հետևյալ ժամկետները՝ քսանհինգ տարի՝ տասնհինգ տարուց ավելի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքում, քսան տարի՝ տաս տարուց ավելի ժամկետով իրավունքներից զրկելու կամ տասից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքում և այլն¹⁶: ԳԴՀ քրեական օրենսգրքի պարագրաֆ 79-ը սահմանում է, որ պատիժը կամ այլ միջոցը չի կարող ի կատար ածվել, եթե անցել են հետևյալ ժամկետները՝ քսնհինգ տարի՝ տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում, քսան տարի՝ հինգից տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում և այլն: Ընդ որում, ըստ նշված պարագրաֆի՝ ցեղասպանության համար դատապարտելու կամ ցմահ ազատազրկման դատապարտելու դեպքում վաղեմություն չի կիրառվում¹⁷:

Սեղադրական դատավճռի վաղեմութ-

յան ժամկետները սահմանելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պատիժը կարող է նշանակվել հանցագործությունների կամ դատավճռների համակցության կանոններով, իսկ վերջինիս դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատիժը կարող է լինել քսան տարին:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները սահմանել՝ հաշվի առնելով դատարանի նշանակած պատիժը, ու նախատեսել հետևյալ ժամկետները՝

1) քսանհինգ տարի՝ տասնհինգ տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում,

2) քսան տարի՝ տասից մինչև տասնհինգ տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում,

2) տասնհինգ տարի՝ հինգից մինչև տաս տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում,

3) տաս տարի՝ երեք տարուց մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում,

4) հինգ տարի՝ մինչև երկու տարի ժամկետով ազատազրկման կամ ավելի մեղմ պատժի դատապարտելու դեպքում:

Կարծում ենք, որ քրեական պատասխանատվության ենթարկելու և մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետների՝ մեր կողմից առաջարկված տարբերակները կարող են նպաստել արդարության սկզբունքի գործնական իրագործմանը, քրեական օրենսդրությունը կդարձնեն ավելի կուռ ու տրամաբանական, կվերացնեն գոյություն ունեցող անհամասնությունը, կնպաստեն հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը:

¹ St'u Кобзарев Ф. М. Процессуальные формы применения давности привлечения к уголовной ответственности: Автореф. дис. канд. юрид. наук. Свердловск, 1987, էջ 7, 10:

² St'u Кострова М. Б. Применение норм о давности уголовной ответственности органами внутренних дел: Автореф. дис. канд. юрид. наук. М., 1992, էջ15, 20:

- ³ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք (Ընդհանուր մաս), – Եր.: Երևանի համալս. իրատ., 2009, էջ, 531-532:
- ⁴ Տե՛ս Уголовное право. Общая часть: Учебник / Под ред. И. Я. Козаченко, З. А. Незнамовой, М., 1997 էջ 417-418:
- ⁵ Տե՛ս Еникеев М.И. Общая и социальная психология. М., 1999, էջ 197-199:
- ⁶ Տե՛ս Еникеев М.И. Նշված աշխ. էջ 198:
- ⁷ Նույն հիմնավորմամբ արարքի հանրային վտանգավորության կոստի մասին չի կարող խոսք լինել մաև իրադրության փոփոխության դեպքում:
- ⁸ Տե՛ս Гонтарь И.Я. Парадигмы в уголовном праве и реальность // Правоведение. 2002, N 6, էջ 144:
- ⁹ Տե՛ս ՀՍՄՀ քրեական օրենսգիրք (առ 1-ը մարտի 1987 թվականի կատարված փոփոխություններով և լրացումներով), Եր., 1989:
- ¹⁰ Տե՛ս ՀՍՍՌ քրեական օրենսգիրք (պաշտոնական տեքստ առ 1-ը հուլիսի 1951թ. փոփոխություններով և հոդվածական նյութերի հավելվածներով), Եր., 1951:
- ¹¹ Տե՛ս Уголовный кодекс Испании, М., 2006, էջ 48-49:
- ¹² Տե՛ս Уголовный кодекс ФРГ, М., 2006, էջ 220-221:
- ¹³ Տե՛ս Сверчков В.В. Освобождение от уголовной ответственности, прекращение уголовного дела (преследования), отказ в его возбуждении: проблемы теории и практики. М., 2008, էջ 244-245:
- ¹⁴ Տե՛ս Аликперов Х., Курбанова К. УК РФ и некоторые проблемы освобождения от уголовной ответственности // Государство и право, 2000, N1, էջ 59, Аликперов Х.Д. Освобождение от уголовной ответственности. Воронеж, 2001, էջ 62:
- ¹⁵ Տե՛ս Ткачевский Ю.М. Освобождение от отбывания наказания. М., 1970 էջ 197,
- ¹⁶ Տե՛ս Уголовный кодекс Испании, М., 2006, էջ 49:
- ¹⁷ Տե՛ս Уголовный кодекс ФРГ, М., 2006, էջ 226-227:

Քրեչալի ՂԱՏԱՉԱՐՈՒԹՅՈՒՆ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО УСТАНОВЛЕНИЯ СРОКОВ ДАВНОСТИ ПРИВЛЕЧЕНИИ К УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ И ИСПОЛНЕНИЯ ОБВИНИТЕЛЬНОГО ПРИГОВОРА

Кристине АРСЕНЯН

Преподаватель кафедры правоведения и методики ее преподавания факультета истории и правоведения ЕГПУ

В статье исследуются вопросы законодательного определения сроков давности. Автор отмечает, что данный вопрос должен решаться не произвольно, а на основе концепции об основании освобождения лица совершившего преступление в силу истечения срока давности. Автор придерживается той концепции, что таким основанием является утрата лицом общественной опасности. Автор отмечает, что сроки давности установленные в действующем УК РА не соответствуют данной концепции, не сбалансированы, не позволяют

соблюдать и претворить в жизнь принцип справедливости. Поэтому автор предлагает установить более длительные сроки давности привлечения к уголовной ответственности. При этом, по мнению автора, эти сроки должны быть еще больше при рецидиве преступления. Что касается сроков давности исполнения обвинительного приговора, то автор предлагает установить их исходя из срока назначенного наказания. При этом эти сроки должны намного превышать срок назначенного наказания.

По мнению автора принятие этих законодательных изменений устранил существующее несбалансированность уголовного кодекса, может способствовать претворению в жизнь принципа справедливости и повышению эффективности борьбы с преступностью.